ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«23» մայիսի 2018 թվականի № 57-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2018 թվականի ապրիլի 13-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 30 և 2018 թվականի փետրվարի 23-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 445 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2018 թվականի մարտի 3-ի թիվ Ֆ-154/18 գրությունը, «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերության 2018 թվականի փետրվարի 14-ի թիվ 11 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մուլտի Գրուպ Կոնցեռն» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 24 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թիվ ՇԱԹ-29/585 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Էրթիչի քվարցիտային հանքավայրի 1-ին հանքաշերտի 1.X=4399571 Y=8523300 2.X=4399576 Y=8523279 33.X=4399678 Y=8523293 4. X=4399763 Y=8523336, 5. X=4399777 Y=8523440, 6. X=4399743 Y=8523456, 7. X=4399714 Y=8523352, 2-րդ հանքաշերտի 1.X=4399646 Y=8523534, 2.X=4399683 Y=8523540, 3.X=4399738 Y=8523616, 4.X=4399766 Y=8523814, 5.X=4399748 Y=8523815, 6.X=4399646 Y=8523534 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով)

կոորդինատներով եզրագծված տարածքներում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 492.4 հազ. տ. քվարցիտի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ Լ-585 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4399524 Y=8523263, H=1126.0 (h=0), 2. X=4399528 Y=8523335, H=1086.0 (h=0), 3.X=4399626 Y=8523398, H=1080.0 (h=0), 4.X=4399585 Y=8523552, H=1082.0 (h=0), 5.X=4399685 Y=8523853, H=1050.0 (h=0), 6.X=4399749 Y=8523850, H=1060.0 (h=0), 7.X=4399780 Y=8523786 H=1060.0 (h=0), 8.X=4399784 Y=8523310, H=1108.0 (h=0), 9.X=4399697 Y=8523200, H=1162.0 (h=0), 10.X=4399676 Y=8523200 H=1146.0 (h=0) (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 10.8 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 8000 մ^3 քվարցիտի զանգված:

3.Կնքել օգտակար հանածոյի արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-585 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Էրթիչի քվարցիտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման ընդերքօգտագործման թիվ Պ-585 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ